ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<< 25 >> մարտ 2015 N - 38
ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՌԻԹԱՓ ԳՅՈՒՂԻ Ա. ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, Հայաստանի Հնարապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000թ. հունիսի 2-ի թիվ 102 հրամանի 1.5-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչության պետի՝ 20.03.2015թ. թիվ 52/446-21100315 գրությունը՝

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ

1. Ստեղծել հանձնաժողով՝ <<Վայոց ձորի մարզի Ջառիթափ գյուղի Ա. Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց>> ՊՈԱԿ-ի հիմնական միջոցների գույքագրման համար:
2. Հաստատել հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Հանձնաժողովին՝

3.1 գույքագրման աշխատանքները սկսել 2015թ. մարտի 25-ին և նույն օրը կազմել արձանագրությունը,

3.2 ուսումնասիրել 2011թ. դեկտեմբեր ամսից հիմնական միջոցների շարժը՝ ըստ մուտքի և ելքի փաստաթղթերի:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2015թ. մարտի 25-ի թիվ 38
կարգադրության

<<Վայոց ձորի մարզի Զառիթափ գյուղի Ա. Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց>> ՊՈԱԿ-ում հիմնական միջոցների գույքագրման նպատակով ստեղծված հանձնաժողովի անհատական կազմը

1. Վասակ Կարապետյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ),
2. Նորիկ Կարապետյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ,
3. Կարինե Գևորգյան - <<Վայոց ձորի մարզի Զառիթափ գյուղի Ա. Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար,
4. Մանուշակ Գրիգորյան - <<Վայոց ձորի մարզի Զառիթափ գյուղի Ա. Մելիքյանի անվան միջնակարգ հանրակրթական դպրոց>> ՊՈԱԿ-ի հաշվապահ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար **Կ. Սահակյան**